01/10.1/878-09

2009-01-22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավոր Լարիսա Ալավերդյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ։

1. Նախագծով առաջարկվող դրույթների գերակշիռ մասն արդեն իսկ ամրագրված է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով։ Պարզապես դրանք զետեղված են տարբեր հոդվածներում։

Այսպես, համաձայն նախագծին կից ներկայացված հիմնավորման՝ «նրանք, որոնք քրեական գործ հարուցվելու դեպքում կարող էին լինել տուժող, քաղհայցվոր կամ դրանց ներկայացուցիչ և որոնք գտնում են, որ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշմամբ խախտվել է իրենց իրավունքը, փաստորեն քրեական դատավարության 185-րդ

հոդվածի իմաստով որևէ իրավունքից չեն օգտվում, թեկուզև պրակտիկան գնացել է այն ուղղությամբ, որ նյութերի ելքով անմիջականորեն շահագրգռված անձինք այնուամենայնիվ նման որոշումները բողոքարկում են»։ Իրականում ոչ թե ձևավորվել է բողոքարկման անհիմն կամ ապրիորի պրակտիկա, այլ դրա հիմքում առկա են կոնկրետ օրենսդրական դրույթներ։ Այսպես, համաձայն Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից»։ Նույն հոդվածի 2-րդ մասն ամրագրում է. «Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն նաև դատարան բողոքարկել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում»։

Ի դեպ, հաղորդում ներկայացնող ֆիզիկական կամ իրավաբանական անձը, համաձայն Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի, կարող է բողոքարկել ոչ միայն մերժման որոշումը, այլև քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը։

Այսպիսով, հաղորդում տված անձի իրավունքները գործող օրենսդրությամբ ամենևին սահմանափակված չեն միայն մերժման որոշման պատճենը հանձնելով։

Ինչ վերաբերում է նյութերին ծանոթանալուն, ապա այդ գործնթացը ևս կարգավորված է օրենսգրքի 59-րդ, 61-րդ և այլ հոդվածներով։

Հարկ է նկատի ունենալ, որ նյութերի նախապատրաստման փուլն ընդհանրապես համարվում է ոչ իրավաչափ ինստիտուտ, և դատահիրավական բարեփոխումների շրջանակներում ստեղծված միջգերատեսչական հանձնախմբի կողմից ներկայումս մշակված նախագծով այդ ինստիտուտն ընդհանրապես վերացվում է։ Ըստ սահմանված ժամանակացույցի՝ նախագիծը քննարկման կդրվի սույն թվականի մայիսի 1-ից։

Վերջին հաշվով, քրեական գործ հարուցելը (իսկ այդպիսի ինստիտուտ նախատեսված չէ որևէ իրավական համակարգով, բացառությամբ ԱՊՀ առանձին երկրների, որոնք դեռ պահպանում են խորհրդային իրավական համակարգի տարրերը) չպետք է դառնա հայեցողական որոշման առարկա։ Հանցագործության մասին հաղորդումը համարվելու է հիմք՝ քրեական գործի վարույթը սկսելու համար։

2. Նախագծում նշված չէ, թե այն անձինք, որոնց գործողությունների կամ անգործության կապակցությամբ տրված է եղել հանցագործության մասին հաղորդումը, ինչ կարգով են տեղեկացվելու քրեական գործի հարուցումը մերժելու որոշման մասին և ինչ ժամկետում կարող են դիմել որոշման պատճեն ստանալու համար։

3. Հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները՝

1) նախագծի նախաբանն անհրաժեշտ է միացնել 1-ին հոդվածին՝ նրանից հանելով «Օրենքի 185-րդ հոդվածի» բառերը.

2) 1-ին հոդվածում անհրաժեշտ է՝

ա. օրենքի ընդունման ամիսը գրել տառերով.

բ. «պարբերություններով» բառը փոխարինել «կետերով» բառով.

գ. 1-ին մասը «գործողությունների» բառից հետո լրացնել «կամ անգործության» բառերով, իսկ «որոշման օրինակը» բառերը փոխարինել «քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման պատճեն» բառերով.

դ. 2-րդ մասում «հաղորդումը» բառը փոխարինել «որոշման պատճենն» բառերով.

3) 2-րդ հոդվածում «հրապարակման հաջորդ» բառերը փոխարինել «հրապարակմանը հաջորդող» բառերով։

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն աննպատակահարմար է համարում ներկայացված օրենքի նախագծի ընդունումը։

Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս՝ հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ

Պ-418-26.12.2008-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին

Հայաստանի Հանրապետության Քրեական դատավարության օրենսգրքի /ընդունվել է 01.07.1998թ. ՀՕ-248/ 185-րդ հոդվածում կատարել հետեւյալ լրացումը.

Հոդված *1.* Օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետեւյալ պարբերությունները.

«Անձինք, որոնց գործողությունների կապակցությամբ տրված է եղել հանցագործության մասին հաղորդումը, տեղեկացվում են քրեական գործի հարուցումը մերժված լինելու մասին,

ինչպես նաեւ այն մասին, որ ցանկության դեպքում կարող են դիմել եւ ստանալ որոշման օրինակը։

Հանցագործության մասին հաղորդում տված, ինչպես նաեւ տրված հաղորդման ելքով անմիջականորեն շահագրգռված ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին հաղորդումը ստանալու պահից իրավունք ունեն ծանոթանալու նյութերին, որոնցով մերժվել է քրեական գործի հարուցումը եւ դրանցից կատարելու քաղվածքներ ու պատճենահանումներ ցանկացած ծավալով»։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից։

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Օրենսգրքում հստակ ամրագրված են կասկածյալի, մեղադրյալի, տուժողի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի, փաստաբանի եւ ներկայացուցիչների իրավունքները՝ ծանոթանալու քրեական գործի նյութերին, քաղվածքներ անելու եւ պատճեներ ստանալու վերաբերյալ։

Նյութերի նախապատրաստման ընթացքում, քանի դեռ քրեական գործ հարուցված չէ, դատավարության մասնակիցներից որեւէ մեկի կարգավիճակն օրենսգրքով չի որոշիակացված, կա միայն հանցագործության մասին հաղորդում տվող, որի իրավունքը սահմանափակվում է նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման պատճենը ստանալու եւ այն բողոքարկելու իրավունքներով։

Նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը շահագրգիռ անձի բողոքը չի կարող լինել հիմնավոր, եթե նա չի ծանոթացել նյութերին։
Դատավարության այլ մասնակիցները՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, որոնց գործողությունների կապակցությամբ տրվել է հաղորդումը, կամ նրանք, որոնք քրեական գործ հարուցվելու դեպքում կարող էին լինել տուժող, քաղհայցվոր կամ դրանց ներկայացուցիչ եւ որոնք գտնում են, որ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշմամբ խախտվել է իրենց իրավունքը, փաստորեն քրեական դատավարության 185-րդ հոդվածի իմաստով որեւէ իրավունքից չեն օգտվում, թեկուզեւ պրակտիկան գնացել է այն ուղղությամբ, որ նյութերի ելքով անմիջականորեն շահագրգռված անձինք այնուամենայնիվ նման որոշումները բողոքարկում են։
Նյութերին ծանոթանալու, դրանցից պատճենահանումներ կատարելու հետ կապված հարցերով քրեական հետապնդման մարմնի սուբյեկտիվ մոտեցումները բացառելու եւ պրակտիկայում հարուցվող արգելքները վերացնելու նպատակով, կարեւորվում են առաջարկվող փոփոխությունները։